ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ԿԻՐԱԿԻ, 15 Նոյեմբեր 2020 — 189 — DIMANCHE, 15 Novembre 2020

## Բարեկենդան Յիսնակաց Պահքի

## Prémice de l'Avent



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ժ Կիրակի Զկնի Սրբոյ Խաչին

**10 [ÈME] DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX**

## Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.1-11)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (9.44-50)

## Les lectures de la Bible d'aujourd'hui

**PHILIPPIENS 1.1-11**
**LUC 9.44-50**

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

**Célébration et l'Homélie**
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

**Առաւօտեան Ժամերգութիւն - 9:30-ին**
**Office Matines à 9h30**
**Ս. Պատարագ- ուղիղ սփռում - 10:30-ին**
**La Sainte Messe – En direct à 10h30**
**Հոգեհանգստեան յատուկ պաշտօն - ուղիղ սփռում- ժամը 12:00-ին**
**Spécial Office Réquiem - En direct à 12h00**

DIACRES – ACOLYTES

Organist: M Vahram Sargsyan

Chœur "Gomidas"

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

**LES LECTURES DE DIMANCHE**



**THE SUNDAY READINGS**

## ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ 1.1-11

1Պօղոս եւ Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի ծառաները՝ Քրիստոս
Յիսուսով բոլոր սուրբերուն, որ Փիլիպպէի կողմերն են՝
եպիսկոպոսներով ու սարկաւագներով. 2շնորհք եւ խաղաղութիւն
ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:
3Շնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծմէս՝ ձեզմէ ունեցած բոլոր
յիշատակներուս համար, 4ամէնատեն՝ ամէն աղերսանքիս մէջ:
Ուրախութեամբ կ'աղերսեմ ձեր բոլորին համար, 5քանի որ
հաղորդակից եղաք աւետարանին՝ առաջին օրէն մինչեւ հիմա. 6այս
մասին համոզուած եմ թէ ա՛ն որ սկսաւ բարի գործ մը ձեր մէջ, պիտի
աւարտէ մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը: 7Իրաւացի ալ է ինծի այսպէս
մտածել ձեր բոլորին մասին, քանի որ ձեզ ունիմ իմ սիրտիս մէջ՝՝, ու
դուք բոլորդ հաղորդակցեցաք ինծի եղած շնորհքին՝ թէ՛ իմ կապերուս,
թէ՛ ալ աւետարանին ջատագովութեան եւ հաստատութեան մէջ:
8Որովհետեւ Աստուած վկայ է թէ ո՛րքան կարօտցած եմ ձեզ բոլորդ՝
Քրիստոս Յիսուսի գութով, 9ու սա՛պէս կ'աղօթեմ՝ որ ձեր սէրը
հետզհետէ աւելի առատանայ գիտակցութեամբ եւ ամբողջ
դատողութեամբ, 10որպէսզի դուք զատորոշէք տարբեր բաները՝
անկեղծ եւ անսայթաք ըլլալու համար մինչեւ Քրիստոսի օրը,
11լեցուած արդարութեան պտուղներով Յիսուս Քրիստոսի միջոցով՝
Աստուծոյ փառքին ու գովութեան համար:

## ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 9.44-50

44Բոլորը կ'ապշէին Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ: Մինչ բոլորն
ալ կը սքանչանային Յիսուսի բոլոր ըրածներուն վրայ, ան ըսաւ իր
աշակերտներուն. «Դուք այս խօսքերը ձեր մի՛տքը պահեցէք՝՝,
որովհետեւ մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: 45Բայց
անոնք չէին հասկնար այս խօսքը, եւ անոնցմէ ծածկուած էր՝
որպէսզի չըմբռնեն. ու կը վախնային հարցնել իրեն այդ խօսքին
մասին:

46Մտածում մըն ալ ծագեցաւ անոնց մէջ, թէ արդեօք ո՛վ է մեծագոյնը
իրենց մէջ: 47Յիսուս ըմբռնելով անոնց սիրտին մտածումը՝ առաւ
մանուկ մը, կայնեցուց զայն իր քով, 48ու ըսաւ անոնց. «Ո՛վ որ
կ'ընդունի այս մանուկը իմ անունովս՝ զի՛ս կ'ընդունի, եւ ո՛վ որ զիս
կ'ընդունի՝ զիս ղրկո՛ղը կ'ընդունի. որովհետեւ ա՛ն որ ամենէն
պզտիկն է ձեր բոլորին մէջ, անիկա՛ պիտի ըլլայ մեծը»:

49Յովհաննէս ըսաւ. «Վարդապե՛տ, մէկը տեսանք որ դեւեր կը հանէր
քու անունովդ, եւ արգիլեցինք զայն՝ քանի որ մեզի չի հետեւիր»:
50Յիսուս ըսաւ անոր. «Մի՛ արգիլէք, որովհետեւ ա՛ն որ մեզի
հակառակ չէ, մեր՝՝ կողմէն է»:

## Philippiens 1.1-11

1Paul et Timothée, Serviteurs de Jésus-Christ, à tous les Saints en Jésus-Christ
qui sont à Philippes, avec les Evêques et les Diacres. 2Que la grâce et la paix
vous soient données de par Dieu, notre Père, et de par le Seigneur Jésus-Christ.

3Je rends grâces à mon Dieu toutes les fois que je fais mention de vous. 4En
priant toujours pour vous tous avec joie dans toutes mes prières. 5A cause de
votre attachement à l'Evangile, depuis le premier jour jusqu'à maintenant. 6Etant
assuré de cela même, que celui qui a commencé cette bonne œuvre en vous,
l'achèvera jusqu'à la journée de Jésus-Christ : 7Comme il est juste que je pense
ainsi de vous tous, parce que je retiens dans mon cœur que vous avez tous été
participants de la grâce avec moi dans mes liens, et dans la défense et la
confirmation de l'Evangile. 8Car Dieu m'est témoin que je vous aime tous
tendrement, conformément à la charité de Jésus-Christ. 9Et je lui demande cette
grâce, que votre charité abonde encore de plus en plus avec connaissance et
toute intelligence. 10Afin que vous discerniez les choses contraires, pour être
purs et sans achoppement jusqu'à la journée de Christ; 11Etant remplis de fruits
de justice, qui [sont] par Jésus-Christ, à la gloire et à la louange de Dieu.

## Luc 9.44-50

44 Vous, écoutez bien ces discours : car il arrivera que le Fils de l'homme sera
livré entre les mains des hommes. 45Mais ils ne comprirent point cette parole, et
elle leur était tellement obscure, qu'ils ne la comprenaient pas; et ils craignaient
de l'interroger touchant cette parole.

46 Puis ils entrèrent en dispute, pour savoir lequel d'entre eux était le plus grand.
47Mais Jésus voyant la pensée de leur cœur, prit un petit enfant, et le mit auprès
de lui; 48Puis il leur dit : quiconque recevra ce petit enfant en mon Nom, il me
reçoit; et quiconque me recevra, il reçoit celui qui m'a envoyé. Car celui qui est le
plus petit d'entre vous tous, c'est celui qui sera grand.

49Et Jean prenant la parole, dit : Maître, nous avons vu quelqu'un qui chassait
les démons en ton Nom, et nous l'en avons empêché parce qu'il ne [te] suit point
avec nous. 50Mais Jésus lui dit : ne l'en empêchez point; car celui qui n'est pas
contre nous, est pour nous.





# ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔ

**ՀԱՒԱՏՔԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ**

Կը հաւատանք մէկ Աստուծոյ,
Ամենակալ Հօր, որ արարիչն է
երկինքին ու երկրին. տեսանելի եւ
անտեսանելի ստեղծուածներուն:

Կը հաւատանք մէկ Տէր Յիսուս Քրիստոսի.
Աստուծոյ Որդիին. որ հօր Աստուծմէ ծնած է
որպէս միակ ծնունդ. այսինքն՝ Հօրը Էութենէն
է: Աստուած է Աստուծմէ ծնած. Լոյս է՝ Լոյսէն
յառաջ եկած: Ճշմարիտ Աստուած.
եւ ո՛չ արարած:
Անիկա Հօրը բնութենէն է:
Իրմով ստեղծուած է ամէն ինչ որ կայ
երկինքի մէջ եւ երկրի վրայ. տեսանելի թէ
անտեսանելի: Ինքն էր որ մեզի՝
մարդերուս եւ մեր փրկութեան համար
երկինքէն իջաւ եւ մարմին առաւ,
մարդացաւ, Սուրբ Հոգիին
ներգործութեամբ սուրբ կոյս Մարիամէն
ծնելով որպէս կատարեալ մարդ՝
մարմինով, հոգիով եւ միտքով, եւ ամէն
ինչով որ մարդկային է. Ո՛չ թէ
երեւութապէս, այլ ճշմարտապէս:
Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ,
երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն
մարմինով երկինք ելաւ եւ
Հօրը աջ կողմը նստաւ:
Կը հաւատանք նաեւ՝ թէ վերստին պիտի
գայ, նոյն մարմինով եւ Հօրը փառքով,
ողջերն ու մեռածները դատելու. ինք՝
որուն թագաւորութիւնը անվախճան է:
Կը հաւատանք անեղ եւ կատարեալ
Սուրբ Հոգիին, որ խօսեցաւ Օրէնքին,
մարգարէներուն եւ Աւետարաններուն
ընդմէջէն. որ Յորդանան գետին վրայ
իջաւ, առաքեալներուն ուսուցանեց եւ
սուրբերուն մէջ բնակեցաւ:
Կը հաւատանք նաեւ մէկ, ընդհանրական
եւ առաքելական սուրբ Եկեղեցիին.

մէկ մկրտութեան, ապաշխարութեան,
մեղքերու քաւութեան ու թողութեան.
մեռելներու յարութեան, հոգիներու եւ
մարմիններու յաւիտենական
դատաստանին, երկինքի արքայութեան
հաստատումին եւ յաւիտենական
կեանքին:

**LE SYMBOLE DE LA FOI**

Nous croyons en un Dieu,
le Père Tout Puissant,
crèateur du ciel et de la terre,
des choses visibles et invisibles.

Et en un Seigneur, Jésus Christ,
le Fils de Dieu, le Fils unique né de Dieu le Père,
c'est-à-dire de l'essence du Père, Dieu de Dieu,
lumière de lumière, vrai Dieu de vrai Dieu, engendré
et nom créé; lui-même de la nature du Père,
par qui toute chose a été créée dans les cieux sur
la terre, les choses visibles et invisisbles;
qui, pour nous les hommes, et pour notre salut, est
descendu des cieux, s'est incarné, s'est fait homme,
et est né parfaitement de Marie, la Vierge sainte,
par l'action de l'Esprit Saint et il prit d'Elle corps,
âme et esprit et tout ce qui est dans l'homme,
en réalité et non fictivement;
il subit la passion, fut crucifié, enseveli;
il est ressucité le troisième jour; monté aux cieux
avec le même corps, il est assis à la droite du Père.
Il viendra, avec le même corps et dans la gloire du
Père, pour juger les vivants et les morts, et son
règne n'a pas de fin. Nous croyons aussi au Saint
Esprit incréé et parfait, qui a parlé dans la Loi, les
prophètes et les Evangiles, qui est descendu sur le
Jourdain, a prêché en la personne des Apôtres et a
habité dans les saints.
Nous croyons aussi en une seule Eglise sainte,
catholique et apostolique,
en un baptême, au repentir,
à l'expiation et à la rémission des péchés.
A la résurrection des morts, au jugement éternel
des âmes et des corps, au royaume des cieux
et à la vie éternelle.



# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ

## ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

## Feast de l'église pour la semaine prochaine

Նոյեմբեր – Novembre

2020

16, Երկուշաբթի - Ա. օր Յիսնակաց պահոց:
Lundi 16 – 1er jour du jeûne de l'Avent.

17, Երեքշաբթի - Բ. օր Յիսնակաց պահոց:
Mardi 17 – 2ème jour du jeûne de l'Avent.

18, Չորեքշաբթի - Գ. օր Յիսնակաց պահոց:
Mercredi 18 – 3ème jour du jeûne de l'Avent.

19, Հինգշաբթի - Դ. օր Յիսնակաց պահոց:
Տօն երից ամաց Ընծայեցման
Սուրբ Կուսին ի Տաճարն:
Jeudi 19 - 4ème jour du jeûne de l'Avent.
Fête de la Présentation de la
Sainte Viergeau Temple, à trois ans.

20, Ուրբաթ - Ե. օր Յիսնակաց պահոց:
Vendredi 20 - 5ème jour du jeûne de l'Avent.

21, Շաբաթ – Տօն Սրբոցն Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին եւ Միւռոնայ եպիսկոպոսին:
Samedi 21 – Fête des Saints Grégoire le Thaumaturge, du Patriarche Nicolas et de l'évêque Muron.

# ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



## Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## Արդեօք Գիտէ՞ք թէ.-

**Իսլամացած հայը կրնայ մկրտուիլ Հայոց Եկեղեցւոյ մէջ:**

Այո՛, Հայոց Եկեղեցին մշտապէս ողջունած եւ խրախուսած է ամէն հայորդիի վերադարձը ի«ր ազգային ինքնութեան, արմատներու եւ յատկապէս Մայր Եկեղեցւոյ գիրկը: Ցաւօք, իսլամացած կամ դաւանաթող հայերն ալ պատմութեան եւ անբարենպաստ ժամանակներու պատճառով հեռացած են քրիստոնէութենէն եւ երկար տարիներ ապրած են ո՛չ քրիստոնէական եւ ո՛չ հայկական միջավայրերու մէջ: Եթէ անոնց մէջ կրկին արթնցած է հայկականութիւնը եւ իսկապէս ցանկութիւն ունին մկրտուելու՝ քրիստոնեայ դառնալու, ապա միայն պէտք է ուրախ ըլլալ եւ ցոյց տալ անոնց ճիշդ ճանապարհը:

Իսլամացած հայերուն մկրտելու կամ չմկրտելու խնդրին պէտք է մօտենալ ոչ թէ աւելորդ զգացականութեամբ, այլ հոգեւոր եւ ազգային-եկեղեցական անվտանգութեան տեսանկիւններէն: Գաղտնիք չէ, որ բազմաթիւ այլազգներ, իրենց որոշ շահադիտական նպատակներէն ելլելով, իսլամացած հայերու անուան տակ կը ցանկան մկրտուիլ Հայոց եկեղեցւոյ մէջ: Ուստի եկեղեցին այս հարցին մէջ որոշակի զգուշութիւն կը ցուցաբերէ: Եթէ իսլամացած հայը կը ցանկայ մկրտուիլ, ապա ան պէտք է նախ՝ իր նոյնականացման քարտին մէջ փոխէ կրօնական պատկանելիութիւնը քրիստոնէութեան, երկրորդ՝ դիմէ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան՝ հաստատում ստանալով հայ ըլլալու մասին, երրորդ՝ անցնէ նախապատրաստական-ուսուցողական շրջան: Ի վերջոյ՝ բոլորին ալ հասկնալի է, որ հայկական միջավայրին մէջ մեծցած հայը ունի այլ հոգեբանութիւն եւ մտածողութիւն, քան ըսենք Թուրքիոյ մէջ իսլամութիւն ընդունածը, որ երկար տարիներ ընդհանրապէս առնչութիւն չէ ունեցած հայկականութեան հետ: Ալ չենք խօսիր կրօնական հայացքներու տարբերութեան մասին: Անոր համար իսլամացած հայը պէտք է ունենայ քրիստոնեայ դառնալու անհրաժեշտ գիտելիքները, որպէսզի մկրտուելէն ետք դառնայ Քրիստոսի Եկեղեցւոյ անդամ եւ քրիստոնեայ: Նման մարդոց հետ անհրաժեշտ է շփուիլ առաւել սիրով՛ ուրախութեամբ եւ ամէն ինչ ընել, որպէսզի անոնց մէջ նորովի արթննայ ազգային գիտակցութիւնը:

# ՏՕՆԵՐ



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ ՅԻՍՆԱԿԱՑ (15-21 ՆՈՅԵՄԲԵՐ 2020)

Ահա կը սկսինք Յիսնակաց շրջանը, որ Սուրբ Ծնունդի եւ Յայտնութեան Տօնի պատրաստութեան շրջանն է. ըստ հայկական ծէսին՝ այս շրջանը կ՛ընդգրկէ 50 օր եւ անոր համար ալ կը կոչուի Յիսնակաց. կը սկսի 15 նոյեմբերի յաջորդող կիրակին եւ կը վերջանայ 5 Յունուարին, այսինքն Յայտնութեան տօնի նախօրեակին:

Մինչդեռ լատինական եւ այլ ծէսերու մօտ՝ ան կը կոչուի Ատվենթուս եւ կը տեւէ միայն 25 օր, կը սկսի մէկ դեկտեմբերին եւ վերջ կը գտնէ 25 դեկտեմբերին, Ծննդեան տօնին օրը:

Յիսնակացը յատուկ է միայն առաջին շաբթուայ ընթացքին կատ-արուող Պահքը.



Պահքի նշման կարգը

Մինչ Զատիկէն առաջ՝ Հայ Եկեղեցին 40 օր պահք կը տնօրինէ, Յիսնակաց պահքը կը վերածուի միայն 5 օրուայ, սկսելով առաջին երկուշաբթիէն մինչեւ ուրբաթ օրը: Յիսնակաց շրջանի մնացեալ բոլոր օրերը կարելի է սուրբերու տօնակատարութիւն ընել, եւ պահք ու ծոմ չբռնել:

Նշանակալից է Յիսնակաց առաջին Կիրակի օրուան աւետարանը, որով Տէրը մեզի կը սորվեցնէ Տէրունական Աղօթքը ՙՙՀայր մերը՚՚. Յիշենք որ նոյնպէս կը սկսի նաեւ Մեծ Պահքի շրջանը, ուր Բարեկենդանի աւետարանը դարձեալ Հայր մեր աղօթքին ուսուցումն է, այն տարբերութեամբ որ Մեծ Պահքի սկիզբը կը կարդացուի Մատթէոսի Աւետարանը, մինչդեռ Ծննդեան պատրաստութեան առթիւ՝ կը կարդացուի Ղուկասի աւետարանը: Առաքեալները կը խնդրեն Յիսուսէն որ իրենց աղօթել սորվեցնէ, որով յաճախ կը տեսնէին իրենց Տէրը յափշտակուած աղօթքի մէջ եւ կ՛ուզէին իրենք եւս այդպէս աղօթել եւ ոչ թէ Դպիրներու սորվեցուցածին նման, որ ուրիշ բան չէր եթէ ոչ՝ ընթերցումը սաղմոսներուն, դասական ու միապաղաղ ձեւով, իրենց գլուխը առաջ եւ ետ տանելով: Յիսուս երբ աղօթէր, անշարժ կը մնար եւ կարծէք կը միանար իր Հօր եւ փոխադարձ խօսակցութիւն մը տեղի կ՛ունենար Հօր եւ Որդւոյ միջեւ. Արդէն Յովհաննէս Մկրտիչ եւս նոր ձեւի աղօթքներ սկսած էր սորվեցնել իր աշակերտներուն, ինչ որ բարի նախանձը կը շարժէ Յիսուսի առաքեալներուն:

˝Հայր մեր՚՚ աղօթքը այդ օրէն ի վեր՝ պաշտօնական աղօթքը դարձաւ Քրիստոսի հաւատացեալներուն եւ բոլոր եկեղեցիները անխտիր, նոյնիսկ բողոքականները զայն կը կիրարկեն իրենց պաշտամունքներուն մէջ:

Այս ամբողջ շաբթուայ ընթացքին՝ կը կարդանք Ղուկասի աւետարանին 11-րդ գլուխը, ինչպէս նաեւ Պօղոս Առաքեալի Կողոսացւոց ուղղած Թուղթը:

Շաբաթ օրը՝ 21 Նոյեմբերին, կը տօնենք Աստուածածնայ Ընծայումին տօնը, որ կը յիշատակէ Մարիամի նուիրումը տաճարին, որպէս անդրանիկ զաւակ իր ծնողքին, Յովակիմի եւ Աննայի, իր ծննդենէն 75 օր վերջ, ինչպէս որ կը հրամայէր Տիրոջ օրէնքը: Այս տօնը երկրորդական ըլլալով հանդերձ՝ Հայ ծէսին մէջ տեղ գրաւած է, ոչ սակայն իւրայատուկ շարականով մը, այլ Աստուածածնայ Ծննդեան տօնի շարականներն օգտագործելով:

Կիրակի 22 Նոյեմբերը, Յիսնակաց Ա Կիրակին է:

Կիրակի, 15 Նոյեմբեր 2020

**ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՅԻՍՆԱԿԱՑ ՊԱՀՈՑ**

Յիսնակը յիսնօրեայ Պահքի շրջան է, որ կը նախորդէ Աստուածայայտնութեան տօնին: Յիսնակաց Բարեկենդանը 7 օրերու շարժականութեամբ կը նշուի Նոյեմբեր 15-էն մինչեւ 21-ը, այս տարի՝ Նոյեմբեր 15-ին կը նշուի:



**ՅԻՍՆԱԿԱՑ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ**

Ս.Ծնունդի պատրաստութիւնները կը սկսին ծնունդէն յիսուն օրեր առաջ. Յիսնակաց պահքով: Առաջին, չորրորդ եւ հինգերորդ շաբաթները, պահքի շաբաթներ են, աշխարհականներու համար. Պահքին նպատակը Աստուածային ներկայութիւնը մեր մէջ հաստատելն է: Յիսնակի շրջանին, կիրակմուտքի եօթը օրերուն ընթացքին մէյմէկ ծիրանագոյն մոմեր կը վառուին «Խորհուրդ Մեծ եւ Սքանչելի» շարականին երգեցողութեամբ:

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւք երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի
Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհեմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:
Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմացաւ:»Ամէն

## HOLIDAYS

Saturday, November 14, 2020

**COMMEMORATION OF THE APOSTLES ANDREW AND PHILLIP**

Before becoming Christ's disciple Apostle Andrew has been the disciple of St. John the Baptist. He was the brother of the Apostle Peter and was a fisherman. After the Ascension of

the Lord and the Descend of the Holy Spirit Apostle Andrew has preached in Northern Greece and in Scythe.

Apostle Phillip was from the town Bethsaida. Perhaps he also has been the disciple of St. John the Baptist. He has preached in Asia Minor. Apostle Philip has been martyred and crucified in the town Heliople.

Sunday, November 15, 2020

**EVE OF THE FAST OF ADVENT**

This is the beginning of Advent - the period of “Fifty Days” (Hisnak or Yisnak) beginning with the Sunday nearest to the 25th of November and ending with the Saturday next after the Sunday nearest to the 6th of January, the Feast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ. Thus it covers a period of seven constant days.

## ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

## SERVICE POUR LE REPOS DE L’ÂME

## SERVICE FOR THE REPOSE OF SOUL

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

**ԿԻՐԱԿԻ, 15 ՆՈՅԵՄԲԵՐ 2020**

Առաջնորդ սրբազան հօր թելադրանքով եւ նախաձեռնութեամբ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ Ծխական Խորհուրդին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յանուն Հայրենիքի ազատութեան տեղի ունեցող Արցախի ճակատամարտին մեր քաջարի զինծառայող հերոսներու յաւէտ յիշատակին:

**Գրիգորյան Կարեն Արբենի, ծնվ. 2001թ.**
**Սահակյան Արմեն Արմանի, ծնվ. 2000թ.**
**Պահեստազորային Դադամյան Արմեն Վալերիի, ծնվ. 1980թ.**
**Պահեստազորային Ծատրյան Ալբերտ Արթուրի, ծնվ. 1991թ.**
**Պահեստազորայի Գագրեյան Գոռ Ստյոպայի, ծնվ. 1996թ.**
**Կամավորական Ավետիսյան Մարտուն Պապիշի, ծնվ. 1960թ.**
**Գրիգորյան Արթուր Վոլոդյայի, ծնվ. 1977թ.**
**Հովհաննիսյան Վարդան Գյորգի, ծնվ. 2001թ.**
**Հովհաննիսյան Գառնիկ Կարենի, ծնվ. 2001թ.**
**Գալստյան Տիգրան Գառնիկի, ծնվ. 2000թ.**

Սուքիասյան Ստյոպա Սարդարի, ծնվ. 2001թ.
Կիրակոսյան Հայկ Արծվիկի, ծնվ. 1986թ.
Կամավորական Բարսեղյան Ռոբերտ Վարազդատի, ծնվ. 1998թ.
Եգանյան Գառնիկ Ֆելիքսի, ծնվ. 2001թ.
Զաքարյան Գառնիկ Սիսակի, ծնվ. 1976թ.
Գալստյան Վաղարշակ Սերյոժայի, ծնվ. 1989թ.
Մանուկյան Արարատ Գագիկի, ծնվ. 1983թ.
Վարդանյան Արտակ Հուսիկի, ծնվ. 1986թ.
Կամավորական Խաչատրյան Կիմ Սիմոնի, ծնվ. 1995թ.
Արշակյան Ռուբեն Սամվելի, ծնվ. 1983թ.
Կարապետյան Հմայակ Գրիշայի, ծնվ. 1979թ.
Չոբանյան Հարություն Սարգսի, ծնվ. 1993թ.
Կամավորական Գրիգորյան Դավիթ Կամոյի, ծնվ. 1996թ.
Գալստյան Արթուր Սուրենի, ծնվ. 1964թ.
Ասատրյան Կարեն Գյորգի, ծնվ. 1980թ.
Պահեստազորային Ադամյան Գենադի Գեորգիի, ծնվ. 1956թ.
Հակոբյան Կարապետ Նշանի, ծնվ. 1997թ.
Պողոսյան Արթուր Սիսակի, ծնվ. 1997թ.
Բաբաջանյան Գյորգ Դավթի, ծնվ. 2001թ.
Մինասյան Արմեն Սմբատի, ծնվ. 2001թ.
Մելիքսեթյան Կարեն Արմենի, ծնվ. 2001թ.
Կարապետյան Հրահատ Փայլակի, ծնվ. 1983թ.
Բաբայան Աշոտ Մանասերի, ծնվ. 1983թ.
Պահեստազորային Գաբրիելյան Գագիկ Ավետիսի,
ծնվ. 1952թ.
Պետիկյան Կարեն Վարդանի, ծնվ. 1998թ.
Տիգրանյան Առաքել Տիգրանի, ծնվ. 2002թ.
Սուքիասյան Հայկ Արտուշի, ծնվ. 1996թ.
Սողոմոնյան Արտակ Սողոմոնի, ծնվ. 1990թ.
Սուքիասյան Հարություն Արմենի, ծնվ. 1997թ.
Մարգարյան Սերյոժա Հմայակի, ծնվ. 1991թ.
Շահինյան Հակոբ Արտակի, ծնվ. 1987թ.
Պահեստազորային Հարությունյան Գրիգոր Լյոնի,
ծնվ. 1984թ.
Փանդունց Սոս Մուշեղի, ծնվ. 2001թ.
Պահեստազորային Հարությունյան Հովհաննես Ժիրայրի,
ծնվ. 1991թ.
Պահեստազորային Գրիգորյան Արտյոմ Աշոտիկի, ծնվ. 1975թ.
Պահեստազորային Աղաբեկյան Միհեր Զարմոյի, ծնվ. 1972թ.
Պահեստազորային Աբրահամյան Արմեն Անդրանիկի, ծնվ. 1973թ.

Պողոսյան Հովհաննես Գագիկի, ծնվ. 1992թ.
Հայրապետյան Գոռ Լյոնի, ծնվ. 1992թ.
Կիրակոսյան Երեմ Զավենի, ծնվ. 1992թ.
Լալայան Անդրանիկ Գրիշայի, ծնվ. 1990թ.
Բարխուդարյան Արմեն Կարենի, ծնվ. 1989թ.
Ասրյան Դավիթ Արտյուշայի, ծնվ. 1986թ.
Պահեստազորային Բրուտյան Վարուժան Ալեքսանդրի, ծնվ. 1968թ.
Գրիգորյան Արամ Էռնեստի, ծնվ. 2002թ.
Պահեստազորային Օհանյան Հրաչիկ Էրիկի, ծնվ. 1994թ.
Պահեստազորային Գրիգորյան Վարուժան Սիմոնի, ծնվ. 1979թ.
Պահեստազորային Խաչատրյան Սուքիաս Անդանիկի, ծնվ. 1983թ.
Պահեստազորային Նիկողոսյան Ջանիբեկ Դավիթի, ծնվ. 1979թ.
Պահեստազորային Սաֆարյան Մարատ Արմենի, ծնվ. 1982թ.
Պահեստազորային Հովհաննիսյան Գերասիմ Լյոշայի, ծնվ. 1974թ.
Պահեստազորային Աբրահամյան Էդուարդ Իլյիչի, ծնվ. 1967թ.
Պահեստազորային Այվազյան Վարդան Արայի, ծնվ. 1995թ.
Հովհաննիսյան Մխիթար Գրիգորիի, ծնվ. 1982թ.
Գրիգորյան Հովիկ Արսենի, ծնվ. 1996թ.
Գաբրիելյան Լեռնիկ Վլադիմիրի, ծնվ. 1990թ.
Չոբանյան Արեն Ավագի, ծնվ. 2001թ.
Ասատրյան Հովիկ Հովհաննեսի, ծնվ. 2000թ.
Պահեստազորային Դավիդյան Հովհաննես Վլադիկի, ծնվ. 1994թ.
Շաքարյան Գուրգեն Կամոյի, ծնվ. 1991թ.
Մելիքյան Հայկ Սարգսի, ծնվ. 2001թ.
Սողոմոնյան Կորյուն Կառլենի, ծնվ. 1984թ.
Համբարձումյան Հրայր Հարությունի, ծնվ. 1999թ.
Հակոբյան Ռուսլան Կարոյի, ծնվ. 1985թ.
Վահանյան Սուրեն Հարությունի, ծնվ. 1994թ.
Հակոբյան Պարույր Գրիգորի, ծնվ. 1990թ.
Կակոյան Վլադիմիր Իշխանի, ծնվ. 2001թ.
Գրիգորյան Նվեր Հայկազի, ծնվ. 2000թ.
Առաքելյան Անդրանիկ Գուրգենի, ծնվ. 2001թ.
Արսենյան Նելսոն Վազգենի, ծնվ. 1988թ.
Խաչատրյան Արտակ Ավետիսի, ծնվ. 1993թ.
Ստեփանյան Հայկ Հրաչիկի, ծնվ. 1996թ.
Ապրեսյան Կարեն Արմենի, ծնվ. 2001թ.
Հովհաննիսյան Ալբերտ Արարատի, ծնվ. 2001թ.

**Բադոյան Արման Արմենի, ծնվ. 2002թ.**
**Սաֆարյան Մարատ Էդիկի, ծնվ. 1995թ.**
**Բաղրամյան Բարիս Արսենի, ծնվ. 1998թ.**
**Կամավորական Հարությունյան Հակոբ Վոլոդիայի, ծնվ. 1972թ.**
**Յաղուբյան Սարգիս Սլավիկի, ծնվ. 2001թ.**
**Հովսեփյան Նարեկ Գրիգորի, ծնվ. 1999թ.**
**Շահինյան Արմեն Գեղամի, ծնվ. 2001թ.**
**Շահինյան Ռուբեն Գեղամի, ծնվ. 2001թ.**
**Սողոմոնյան Վահան Խաժակի, ծնվ. 2001թ.**
**Սարգսյան Յուրի Համազասպի, ծնվ. 1995թ.**
**Գրիգորյան Մորիս Հակոբի, ծնվ. 2001թ.**
**Գրիգորյան Ռոման Վագիֆի, ծնվ. 1982թ.**
**Միքաելյան Վալերի Արմենի, ծնվ. 1991թ.**
**Պահեստազորային Գյորգյան Վարդան Սեյրանի, ծնվ. 1977թ.**
**Կամավորական Ստեփանյան Արիստակես Հոկտեմբերի, ծնվ. 1993թ.**
**Պահեստազորային Գրիգորյան Անդրանիկ Գրիգորի, ծնվ. 1989թ.**
**Քոթանջյան Էդգար Վահագնի, ծնվ. 2001թ.**
**Գասպարյան Պարգև Սուրենի, ծնվ. 2001թ.**
**Աղաբաբյան Էդգար Իշխանի, ծնվ. 2002թ.**
**Ուզունյան Դավիդ Բագրատի, ծնվ. 2001թ.**
**Սահակյան Հայկ Հարությունի, ծնվ. 2000թ.**
**Ասլանյան Վազգեն Արմենի, ծնվ. 2001թ.**
**Գյորգյան Գյորգ Գրիգորի, ծնվ. 2000թ.**
**Ղամբարյան Հովհաննես Մխիթարի, ծնվ. 2000թ.**
**Գյորգյան Մարատ Արթուրի, ծնվ. 2000թ.**
**Պետրոսյան Ռոբերտ Արտյոմի, ծնվ. 2001թ.**
**Խաչատրյան Գյորգ Ռուստամի, ծնվ. 2001թ.**
**Հովհաննիսյան Սերգեյ Արտաշեսի, ծնվ. 2001թ.**
**Միքայելյան Էրիկ Արսենի, ծնվ. 2001թ.**
**Անտոնյան Սամվել Դավթի, ծնվ. 2000թ.**
**Ավագյան Էմմանուել Արսենի, ծնվ. 2000թ.**
**Սարգսյան Արմենակ Արտակի, ծնվ. 1998թ.**
**Ճաղարյան Արման Արտակի, ծնվ. 1999թ.**
**Մնացականյան Գրիգոր Գուրգենի, ծնվ. 1995թ.**
**Սերոբյան Կարեն Գարեգինի, ծնվ. 1981թ.**
**Խաչատրյան Հովհաննես Արթուրի, ծնվ. 1991թ.**
**Մալխասյան Արտյոմ Մելիքսեթի, ծնվ. 1982թ.**
**Ադյան Վահե Ավետիքի, ծնվ. 2001թ.**

Մանասյան Սամվել Համլետի, ծնվ. 2001թ.
Փարսոյան Արմեն Արտակի, ծնվ. 2001թ.
Կամավորական Բադիկյան Վահագն Ժորայի ծնվ. 1969թ.

09:06-13.11.20
Դերիկյան Հայկ Արթուրի, ծնվ. 2002թ.
Նազարյան Գալուստ Մանուկի, ծնվ. 1999թ.
Մախմուրյան Ռազմիկ Արսենի, ծնվ. 2002թ.
Գաբրիելյան Վոլֆիկ Վախթանգի, ծնվ. 1994թ.
Պահեստազորային Շամամյան Սարգիս Հրաչիկի, ծնվ. 1982թ.
Պահեստազորային Պողոսյան Մանուկ Արթուրի, ծնվ. 1991թ.
Պահեստազորային Դովլաթբեկյան Էդվարդ Գագիկի, ծնվ. 1984թ.
Սահակյան Արմեն Դավիթի, ծնվ. 1994թ.
Կիրակոսյան Գյորգ Ռաֆայելի, ծնվ. 1988թ.
Դավթյան Մնացական Վազգենի, ծնվ. 1995թ.
Գրիգորյան Դավիթ Կոմիտասի, ծնվ. 1977թ.
Մկրտչյան Դավիթ Մուշեղի, ծնվ. 1992թ.
Պահեստազորային Սարգսյան Կարեն Խաչիկի, ծնվ. 1997թ.
Մուրադյան Աշոտ Սերգեյի, ծնվ. 1965թ.
Կամավորական Հայրապետյան Արմեն Հայրապետի, ծնվ. 1988թ.
Կամավորական Մարտիրոսյան Արտուշ Ալեքսանի, ծնվ. 1989թ.
Հարությունյան Գյորգ Արմանի, ծնվ. 1999թ.
Կամավորական Սողոմոնյան Գոռ Արծվիկի, ծնվ. 1988թ.
Միրզոյան Գուրգեն Բագրատի, ծնվ. 1990թ.
Կամավորական Ստեփանյան Գրիգոր Յաշայի, ծնվ. 2000թ.
Կամավորական Պետրոսյան Թաթուլ Արշակի, ծնվ. 1982թ.
Թովմասյան Թաթուլ Վարդանի, ծնվ. 2001թ.
Մուրադյան Մուշեղ Սարգսի, ծնվ. 1993թ.
Կամավորական Սարգսյան Վարդան Սամվելի, ծնվ. 1987թ.
Կամավորական Աֆիյան Յակով Սերգեյի, ծնվ. 1998թ.
Կամավորական Թովմասյան Արտակ Աբելի, ծնվ. 1994թ.
Կամավորական Ղազարյան Արտակ Հովհաննեսի, ծնվ. 1982թ.
Կամավորական Մուշեղյան Գեղամ Սեյրանի, ծնվ. 1969թ.
Կամավորական Ղազարյան Հայկ Անուշավանի, ծնվ. 1967թ.
Կամավորական Փաշյան Հմայակ Սոսի, ծնվ. 1983թ.
Պահեստազորային Սարիբեկյան Սարգիս Հովհաննեսի,
ծնվ. 1989թ.
Պահեստազորային Սարյան Սեյրան Արամայիսի, ծնվ. 1969թ.
Պահեստազորային Հովհաննիսյան Սուրեն Աշոտի, ծնվ. 1974թ.
Կամավորական Կիզիրյանց Գառնիկ Էդուարդի, ծնվ. 1991թ.

Կամավորական Կարապետյան Արսեն Ստյոպայի, ծնվ. 1965թ.
Գեղամյան Վիլգեմ Արագոնի, ծնվ. 2001թ.
Ալլահվերդյան Լեոնիդ Ջոնիկի, ծնվ. 2000թ.
15:02-13.11.20
Հարությունյան Աղասի Ռուբիկի, ծնվ. 1968թ.
Մկրտչյան Արայիկ Աբրահամի, ծնվ. 1967թ.
Մկրտչյան Ալբերտ Յուրիկի, ծնվ. 1979թ.
Իսրայելյան Արկադի Հենրիկի, ծնվ. 1978թ.
Կամավորական Մարգարյան Աշոտ Աղասու, ծնվ. 1963թ.
Կամավորական Թովմասյան Արամայիս Կոնստանտինի, ծնվ. 1997թ.
Ստեփանյան Արթուր Անանիայի, ծնվ. 1998թ.
Ծատուրյան Գյորգ Ալբերտի, ծնվ. 2002թ.
Ֆիդանյան Գնել Մինասի, ծնվ. 1985թ.
Ալեքսանյան Էմիլ Արմենի, ծնվ. 2000թ.
Կամավորական Հավատյան Հայկ Խաչիկի, ծնվ. 1984թ.
Լոռեցյան Նարեկ Արտակի, ծնվ. 2000թ.
Մարտիրոսյան Նորայր Արտավազդի, ծնվ. 1958թ.
Վանցյան Սուրեն Արտաշեսի, ծնվ. 1996թ.
Կամավորական Մելիքյան Սուրեն Էդուարդի, ծնվ. 1978թ.
Պահեստազորային Մուրադյան Վաչագան Արտյոմի, ծնվ. 1999թ.
Կամավորական Մանուկյան Վարդգես Աշոտի, ծնվ. 1987թ.
Գրիգորյան Նվեր Վազգենի, ծնվ. 1976թ.
Կամավորական Երանոսյան Արմեն Հմայակի, ծնվ. 1972թ.
Մաթյոսյան Արմեն Գագիկի, ծնվ. 1994թ.
Սարգսյան Տիգրան Նորայրի, ծնվ. 1966թ.
Գրիգորյան Սարո Ռազմիկի, ծնվ. 1988թ.
Կամավորական Քրիստափոր Արթին Անդրանիկի, ծնվ. 1972թ.
Կամավորական Հովհաննիսյան Մարատ Ռոբերտի, ծնվ. 1961թ.
Կամավորական Իսունց Վիկտոր Շամխալի, ծնվ. 1949թ.
Կամավորական Ջումխուրյան Արմեն Աշոտի, ծնվ. 1997թ.
Կամավորական Ղազարյան Արմեն Սարգսի, ծնվ. 1969թ.
Կամավորական Օհանյան Արթուր Նիկոլայի, ծնվ. 1973թ.
Կամավորական Հայրապետյան Էդուարդ Վաղինակի, ծնվ. 1982թ.
Կամավորական Ոսկանյան Կոստան Կորյունի, ծնվ. 1966թ.
Գալստյան Խաչիկ Սահակի, ծնվ. 1989թ.
Բաղդասարյան Տիգրան Հովհաննեսի, ծնվ. 1990թ.
Փարսադանյան Արամ Ռաֆիկի, ծնվ. 1972թ.
Կամավորական Միքայելյան Հայկ Հրանտի, ծնվ. 1984թ.

**Քոչինյան Միեր Մարտինի, ծնվ. 2001թ.**
**Խուրշուդյան Սաշա Զինվորի, ծնվ. 2000թ.**
**Դանիելյան Հայկ Աշոտի, ծնվ. 2002թ.**
**Թյոնյան Արամ Անուշավանի, ծնվ. 2001թ.**
**Սիմոնյան Սեյրան Սոսի, ծնվ. 2000թ.**
**Ավագյան Գնել Արայիկի, ծնվ. 2001թ.**
**Առաքելյան Հովհաննես Սմբատի, ծնվ. 1992թ.**
**Վարդանյան Թորգոմ Արամի, ծնվ. 1992թ.**
**Ավետիսյան Դավիթ Ռադիկի, ծնվ. 1982թ.**
**Այվազյան Ադամ Նվերի, ծնվ. 1996թ.**

Տիկ. Սօնիա Թըրնամեան
Պրն. Սամիր Պալի եւ ընտանիք
Տիկ. Նայլա Պալի եւ ընտանիք
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ հօր, մեծ հհօր եւ մօրեղբօր
**ՆՈՒՊԱՐ ՊԱԼԻ**
**(NOUBAR BALI)**
Մահուան 2-րդ տարելիցին առիթով
**Ինչպէս նաեւ**
Իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին
**ԼԷՅԼԱ ՄՈՒԹՐԱՆ ՊԱԼԻ**
**(LEILA MOUTRAN BALI)**
(մահացած Եգիպտոս)
Մահուան 40-ին առիթով

Պրն. Վրէժ Թուխեանի
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իր սիրեցեալ մօր
**ԺԱՆԷԹ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ**
**(JEANETTE KOUYOUMDJIAN)**
Մահուան 7-րդ տարելիցին առիթով

«Արդարեւ եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ Աստուած Յիսուսի միջոցով եւ կեանքի պիտի բերէ ննջողները՝ անոր հետ» (1 Թեսղ. 4:13)։

‘’Car si nous croyons que Jésus est mort, et qu'il est ressuscité; de même aussi ceux qui dorment en Jésus, Dieu les ramènera avec lui’’
(1 Thessaloniciens 44 :13).

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON À L'ÉGLISE** — **DONATION FOR THE CHURCH**

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC**
**Donations of November have been received with great appreciation**
**2020**

**CHURCH:**
Mr. & Mrs. Raffi Frengul $100

**RENOVATION FUND:**
Mr. & Mrs. Aret Tasciyan $100

**IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**
**THE LATE SIRVART KILICYAN:**
Mrs. Luisa Fazliyan $100
Mr. Hayg Fazliyan $100
Mr. Antreas Arevian $20

**ARTZAKH HUMANITARIAN FUND:**
Mr. Vant Tashdjian $3000
Mrs. Nairi Kehyaian $2000
Mr. & Mrs. Jeff & Ani Tchaderjian $500
Mr. & Mrs. Raffi Frengul $100
Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy $100
Mr. & Mrs. Roupen & Meline Arsever $100
Mrs. Emilie Cossette $100
Mr. Samir Artaki $50

**HOKEHANKISD:**
**THE LATE KEVORK SOZKES:**
Mrs. Henika Sozkes $100

**THE LATE ROSE TATIGIAN & YEVKINE KARIBIAN:**
Mr. Sevan Tatigian $500
**THE LATE JEANETTE KOUYOUMDJIAN:**
Mr. Vrej Toukhian $20

**THE LATE VARTUK KANAR:**
Mrs. Nadya Fenerci $50

## MDARDARA
## LENTIL & RICE PILAF



To prepare this dish you will need:(4 servings)

Serve it with a green salad or vegetables such as radish, tomato, cucumber, spring onion… Some people serve it with yogurt

1 cup brown lentil, rinsed
3/4 cup rice soaked for 10 minutes and drained
2 medium onion coarsely chopped
3 tbsp olive oil
5 cups of water
salt to taste

4-5 onions cut a la julienne and fried for garnish
Boil the lentil in 3 cups of water until tender, but firm. Set aside.

Cook the onion in olive oil, until tender and fragrant, add the rice with 2 cups of water and cook. Add the lentils in the last 5 minutes to cook all together. Add salt to your taste.

### HALVA WITH PERFECT PROPORTION



Ingredients for syrup :
4 1/2 cups of water
2 1/2 cups of sugar
1 cinnamon stick
1 tablespoon lemon juice
1/4 teaspoon grated cloves
for the mixture with semolina:
2/3 cup seed oil
2 cups of thick semolina
nuts and cinnamon for sprinkling
Instructions
Put all the syrup ingredients in a large pan
and cook over medium heat for 5-7 minutes.
In another saucepan put the oil with semolina and
roast on medium heat, stirring constantly.
The more we roast, the more delicious the halva becomes,
but of course so much heavier.

# Շաբթուայ խորհրդածութիւններ



Շատերուն կը թուի, թէ սուրբերը մեզմէ հեռու են: Բայց անոնք հեռու են անոնցմէ, որոնք իրենք կը հեռանան եւ շատ մօտ են անոնց, որոնք Քրիստոսի պատուիրանները կը պահեն... Անոնք կը լսեն մեր աղօթքները եւ մեր հոգիները կը զգան, որ անոնք մեզի համար կ'աղօթեն:
Ս. Սիվղանոս Աթոսացի

Աստուծոյ մօտ չկան մոռցուած մարդիկ, եւ
Աստուծոյ Նախախնամութիւնը բոլորին կը տեսնէ:
Իոանն վրդ. Կրեստյանկին

Մի՛ տրտմիք, մի՛ տխրիք. երջանկութեան ժամանակը նորէն կու գայ: Սպասեցէ՛ք, համբերեցէ՛ք. որոնք կը սպասեն, անոնց համար պարգեւ կայ:
Նիկոլայ Ա Քինյ. Գուրեանով

Քանի որ Աստուած մեզի պատուիրեց ծածուկ բարեգործութիւն ընել, Ան նոյնպէս ծածուկ  բարին կը գործէ մեզի համար:
Շենուդա Գ պատրիարք

Սորվիր աղօթել եւ ամէն ինչի համբերել, ինչպէս Տէր Յիսուս Քրիստոս համբերեց: Եթէ Անոր ծաղրեցին եւ խաչեցին, այդ ժամանակ մենք ինչպէս ակնկալենք ի՞նչ-որ արդարութիւն է:
Այդ չկայ երկրի վրայ եւ ըլլալու չէ:
Արդարութիւնն ու ճշմարտութիւնը խաչուած են խաչի վրայ...:
Հայր Նիկոն Վորոբյով

Մայրական աղօթքը երեխաներու համար օգնութիւն է
ամբողջ կեանքի համար:
Իոանն վրդ. Կրեստյանկին



**ՄԱՍՆԱԿՑԻՆՔ ՀԱՅՈՑ ՔԱՋԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ ՅԱՆՈՒՆ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ**

Մայր Հայրենիքի եւ ի մասնաւորի Արցախի դիմագրաւած դժնդակ իրավիճակներուն, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, որպէս սփիւռքահայեր բերել մեր հնարաւորութիւններն ու ջանքերը մէկտեղելու վասն մեր Մայր Հայրենիքի եւ Արցախի փրկութեան եւ ազատագրութեան:

Ձեր մասնակցութեան համար

Կարելի է հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակ եւ կամ՝ հետեւեալ **անմիջական թիւերէն** մէկուն՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Պատասխանատու անձերուն՝

(514) 865-3911, (514)825-5612 եւ (514)792-2866:

Կարելի է այցելել նաեւ՝ եկեղեցւոյ կայքէջը

Website: Saintgregory.ca կամ armenianchurch.ca –

Artzakh Humanitarian Fund

Faire un don

**Նուիրատուութեան դիմաց – ստանալ տուրքէ զերծ ստացագիր:**

**Իւրաքանչիւր Հայորդի իր մասնակցութեամբ կ'արտայայտէ իր ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրական պարտաւորութիւնը ի գին հայրենի հողին փրկութեան:**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 - Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

stgregorychurch@gmail.com Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**ՍՐՏԱԲՈՒԽ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ**
**Ի ՆՊԱՍՏ**
**ՄԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ**

Գիտակցելով այս օրերու դժուարութեան, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները այցելելով Եկեղեցւոյ կայքէջը Website - Saintgregory.ca

Faire un don

Շնորհակալութիւն

**YOUR HEARTFELT DONATIONS**
**FOR THE SUPPORT OF OUR CHURCH:**

Concerning the difficulties that we are facing to those days; we humbly ask our parishioners to remember St. Gregory the Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.

Your donations can also be made through:

Church website – saintgregory.ca by:

Faire un don

**Thank You!**

## Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
## St. Gregory the Illuminator Armenian Cathedral

### ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՄ ԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

**Ուղիղ Հեռարձակում – Live**

**Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**




**Ամէն Չորեքշաբթի**

**1 Հոկտեմբեր 2020 սկսեալ երեկոյեան ժամը 5:00-ին:**

**Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի հետ:**

**MESSAGE SPIRITUELLE**
**ET SERVICE DU SOIR**

**avec le R.P. David Margaryan**

**Chaque Mercredi**

**à partir du 1er Octobtre 2020 à 17h00.**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն առցանց Եկեղեցւոյ դիմատետրի էջով:**

**Nous invitons nos chers fidèles à participer à ces séances d’interprétations bibliques via la page Facebook de l’Église.**

**Հաճելի հոգեւոր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ հաւատացեալներուն:**

**Nous souhaitons a nos fidèles des moments spirituels agréables.**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

# ԱՄԵՆԱՄՍԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



## Շաբաթ, 28 Նոյեմբեր 2020

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. "Ի՛նչ որ կը խնդրէք աղօթքով, հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի"**
**(Ղուկ. 11:24):**

## Samedi, le 28 Novembre 2020

Office du soir à 17h00.

**"C'est pourquoi je vous dis : tout ce que vous demanderez en priant, croyez que vous le recevrez, et il vous sera fait"**
**(Marc 11 :24).**

# ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ




Այս յայտարարութեամբ կը փափաքինք մեր հաւատացեալներուն ուշադրութեան յանձնել թէ՝ Յուղարկաւորութեան կարգի ծրագրաւորման պարագային, նախքան որեւէ այլ գործընթացի ձեռնարկելը, համեստօրէն կը խնդրուի առաջին հերթին հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակ եւ ժամադրուիլ հոգեւոր հովիւին հետ խորհրդակցութեան համար, որպէսզի ճշգրտօրէն կատարուին այն նախաձեռնութիւնները, որոնք պիտի կիրարկուին ըստ հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան իրավիճակին:

Անգամ մը եւս կը փափաքինք շեշտել, եկեղեցւոյ ծառայութեան մատուցման կարեւորութիւնն ու առաջնահերթութիւնը, որպէսզի կարենանք պատշաճօրէն կիրարկել մեր եկեղեցապատկան ծառայութիւնը, զերծ մնալով որեւէ թիւրիմացութենէ եւ անպատեհ շարժառիթէ, օրինակ՝ դիակիզումի պարագային, յուղարկաւորութեան կարգը կը մատուցուի նախքան հրկիզումը, այլապէս, հրկիզուած մոխիրին վրայ արտօնուած չէ յուղարկաւորութեան կարգ կատարել որեւէ մէկ ձեւով, ըստ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ծիսակատարութեան կանոններուն:
Հետեւաբար, մեր յորդորն է անմիջապէս կապ հաստատել եկեղեցւոյ գրասենեակին հետ, հեռաձայնելով՝ (514) 279-3066 թիւին, կազմակերպելու յուղարկաւորութեան կարգին հետ առնչուող հարկ եղած կարգաւորումները:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

## ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէպէք նահանգի առողջապահութեան նախարարին՝ Մոնթրէալի շրջանը վտանգուած է թագաժահրի Covid-19 կարմիր գօտիի զգուշացման հանգրուանով, որուն որպէս հետեւանք խմբային հաւաքականութեան թոյլատրելի թիւը՝ կրճատուած է հասնելով **25 հոգիի**, եւ պարտադրուելով ձեռք առնել առողջապահութեան բոլոր քայլերն ու միջոցները:

Նկատի առնելով համաճարակի ներկայ ընթացքը **առժամաբար կը դադրեցնենք «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ, կատարուող բոլոր տեսակի հիւրասիրութիւններն ու հաւաքները մինչեւ նոր տնօրինութիւն:**

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

**Զերծ մնալ եկեղեցի յաճախելէ նկատի ունենալով հետեւեալ պարագաները.**

1. Բոլոր այն անձինք, որոնք հիւանդանալու բարձր հակամետութիւն ունին:
2. Ձեր անմիջական շրջանակին կամ ընտանիքին մէջ ոեւէ մէկը վարակուած է Թագաժահր Covid-19-ով եւ կամ ունին հետեւեալ ախտանշանները՝

- Ջերմութիւն
- Հազ
- Կոկորդի ցաւ
- Հոտառութեան կամ համի զգալի պակաս

եւ կամ կատարած են Քէպէք նահանգէն դուրս ճամբորդութիւն:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Կարելի է նաեւ առցանց նուիրատուութիւններ կատարել այցելելով Եկեղեցւոյ կայքէջը՝ saintgregory.ca

Faire un don

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

# AVERTISSEMENT

Nous informons nos fidèles que selon le Ministre de la Santé et le Directeur de la Santé publique, la région de Montréal se trouve en zone rouge de la pandémie coronavirus Covid-19. Par conséquence le nombre de fidèles assistant aux offices religieux est limité à 25 personnes. Compte tenu de l'évolution actuelle de la pandémie, nous suspendons temporairement tous types de réceptions et rassemblements dans la salle « Vatché Hovsepian ».

Nous vous souhaitons santé, bien-être et espérons vous tenir informé de tout changement futur ou d'autres détails.

## S'abstenir d'aller à l'église

1- Tous ceux qui ont un risque élevé de tomber malade.

2- Si quelqu'un dans votre environnement immédiat ou un membre de votre famille est actuellement infecté par le covid-19 et/ou présente les symptômes suivants :

- Fièvre
- Toux
- Mal de gorge
- Perte de l'odorat ou du goût

ou a voyagé en dehors du Province de Québec

Vous pouvez également faire des dons en ligne
en visitant le site web de l'église saintgregory.ca

Faire un don

BUREAU DE L'ÉGLISE

# ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ
# ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ




Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Սիրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց հողաթափեր
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջառներ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցւոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառընդառաջի համար նախատեսուած դուրսի մոմեր
- Ջրօրհնէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցւոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցւոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

*«Այս երկրի մէջ ցանէ՛ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»*:

«Հոգեւոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ